ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2016թ. թիվ 9-Ա

Ա.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի, 130-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ում եմ.

1. Աիդա Սարուխանյանին 2016թ. հունվարի 25-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Լեռնապատի Ե.Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2011 թվականի նոյեմբերի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Լեռնապատի Ե.Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աիդա Սարուխանյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունվարի 20
ք.Վանաձոր